«ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԵՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«ԵՊԼՀ-ԳՀԱՇՁԲ-19/17»

ք. Երևան 1313/ԵՊ-19 «24» հուլիսի 2019թ.

«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Կ. Հարությունյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էլիտ Հիլզ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Հ.Եղիազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **շենքի ընթացիկ վերանորոգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[29] :

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

---

[29] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 10,723,200 (տաս միլիոն յոթ հարյուր քսաներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, որից 1 787 200 (մեկ միլիոն յոթ հարյուր ութսունյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[33] .

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[34] : Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն

---

[33] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

[34] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանե հիմնադրամ	«Էլիտ Հիլզ» ՍՊԸ
ք.Երևան, Թումանյան 42	Արմավիրի մ գ Բամբակաշատ 14/1 տ3
Ամերիաբանկ ՓԲԸ, Մոսկովյան մ/6	Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570017727040100	Հ/Հ 1150014351360100
ՀՎՀՀ 00005614	ՀՎՀՀ 04421922
Ռեկտոր Կ.Հարությունյան	Տնօրեն՝ Հ. Եղիազարյան
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
«24» հուլիսի 2019թ. կնքված
«ԵՊԼՀ-ԳՀԱՇՁԲ19/17» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

«ՇԵՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Ծավալաթերթ №1

Հ/հ	Հիմնա վորում	Աշխատանքների անվանումները	Չափ. միավ.	Քանակ	Մեկ միավ. նախ գին	Ընդհանու նախ. գումար
1	2	3	4	5	6	7
		Առաջին մասնաշենք				
		2-րդ հարկ 206 սենյակ, նիստերի դահլիճ				
1	23-164	Հատակի լամինատե ծածկի և շրիշակների քանդում	Քմ	112	0,49	54,71
2	23-164	Լամինատե ծածկի տակի փայտյա մանրահատակի քանդում	քմ	112	0,49	54,71
3	11-80	Պատերի և առաստաղների կլոր սյուների հեծանների հին ներկի մաքրում և սվաղի հարթեցնում	100քմ	2,80	25,09	70,24
4	7-47	Լամինատե պատուհանագոգերի ապամոնտաժում 4քմ/0,35սմ	հատ	9	0,29	2,64
5	25-1 0,6,0,7	Մուտքի երկփեղկանի մետաղապլաստ դռան ապամոնտաժում	քմ	4	3,72	14,89
6	վ21-43	Ակոսների փորում հին սվաղի մեջ էլ.լարերի տեղադրման համար	100մ	0,95	31,83	30,23
7	8-402-2	ՊՊՎ 2x2,5քմմ էլ.լարի տեղադրում փակ լարանցման ,սվաղի տակ	100մ	1,5	51,95	77,93
8	8-417-5	Պոլիեթիլենի Փ-25մմ խողովակի տեղադրում լամինատե հատակների տակ էլ.լարերի համար	գ/մ	30	0,35	10,49
9	8-591-8	Երկտեղանոց խրոցային վարդակների մոնտաժում	հատ	12	1,50	18,00
10	8-591-7	Մեկտեղանոց խրոցային վարդակների մոնտաժում	հատ	5	1,07	5,33
11	8-591-10	էլ անջատիչ երկստեղանի փակ լարանցման համար 6 Ա	հատ	1	1,65	1,65
12	8-591-3	էլ անջատիչ երեքստեղանի փակ լարանցման համար 6 Ա	հատ	1	2,39	2,39
13	շուկ	Տուփ վարդակների , անջատիչների և ճյուղավորման համար	հատ	2	0,08	0,17
14	8-572-1	Պլաստմասե արկղ 6 ավտոմատների համար	հատ	1	8,19	8,2
15	8-525-2	Ավտոմատ անջատիչ միաբեվեռ 32Ա Legrand	հատ	8	4,31	34,46
16	8-472-10	Արտաքին պատից հողանցման ՊՎ 1x6քմմ լարի մոնտաժում	գ/մ	25,0	0,59	14,65
17	8-472-10	Նույնը ներքին պատից հողանցման ՊՎ 1x2,5քմմ լարի մոնտաժում	գ/մ	60,0	0,42	25,25
18	7-84	Պլաստմասե 55սմ լայնությամբ կաղնեգույն պատուհանագոգերի մոնտաժում սոսնձյա շաղախի վրա	քմ/բացվ	10,0	1,46	14,63
19	շուկ	55սմ լայն.պատուհանագոգեր	գ/մ	7,4	6,28	46,5
20	7-91	Փայտյա ՄԴՖ դռան տեղադրում պատերի մեջ 3քմ ավել մակերեսով	քմ	3,15	38,62	121,65
21	7-91	ՄԴՖ դռան ապակեպատ վերնափեղկի տեղադրում	քմ	1	35,37	35,37
22	17-140	Թուջե մարտկոցների ապամոնտաժում մինչև 80կգ քաշով	հատ	4	0,854	3,42
23	34-333	Առաստաղներին կպցնում կապրոնե ցանցով հարդարման համար	100քմ	1,15	59,22	68,10
24	11-186	Առաստաղների միաշերտ սվաղում գաջե /գիպսոնիտե / շաղախով	քմ	115	0,97	112,02
25	14-423	Առաստաղի բարձրորակ ներկում լատեքս ներկով	քմ	115,00	1,72	197,29
26	14-422	Պատերի բարձրորակ ներկում լատեքս ներկով	քմ	161,00	1,45	233,83

27	14-432 նման,	Կլոր սյուների և սյուները իրար հետ հետ կապող հեծանների հարդարում "Վենետիկ" տիպի դեկորատիվ շաղախ	քմ	30	8,18	245,26
28	14-432 նման,	Նույնը պատերի մեջ 50սմ խորությամբ ներս ընկած տարածքները	քմ	15	8,18	122,63
29	14-423	Առաստաղի և սյուների գիպսային քիվերի բարջրորակ լատեքս ներկում	քմ	16,00	1,72	27,45
30	11-73	Շեպերի գաջե սվաղի նորոգում	քմ	8,8	3,44	30,27
31	5-16	Հին տախտակյա հատակների քանդում և նորից տեղադրում ավելացնելով 50% նոր տախտակ	քմ	112	3,75	420,08
32	5-119	Փայտյա հատակների երեսապատում 12մմ հաստության նրբատախտակով	քմ	112,0	4,27	478,39
33	5-122	Հատակի ծածկ 12մմ հաստ.լամինատից պլաստմասե շրիշակներով	քմ	112	7,72	864,79
34	16-261	Պոլիպրոպիլենային խողովակների մոնտաժում Φ=20x3մմ փորձարկումով	մ	12	2,57	30,86
35	18-109	Ալյումինե սեկցիոն ջեռուցման մարտկոցների մոնտաժում H=500մմ	էկմ	15,6	0,60	9,3
36	շուկ	Ալյում.սեկցիաների արժեքը	սեկց	52,0	4,62	240,27
37	շուկ	Մարտկոցների միացման հանգույց	հատ	16,0	1,43	22,83
38	18-229	օդի հեռացման ծորակ	հատ	4	0,41	1,66
39	շուկ	Խցանային փական Φ=15մմ	հատ	8	1,82	14,59
40	շուկ	Կարգավորիչ փական Φ=15մմ	հատ	4	1,86	7,42
41	8-599-1	Առաստաղի 18 կվ հզորության կլոր ԼԵԴ լուսատուների տեղադրում	հատ	10	8,12	81,2
	ընդամենը					**3855,7**
		4-րդ հարկ 408 սենյակ, գերմարենի ամբիոն				
1	11-64	Առաստաղի սվաղի նորոգում գաջե /գիպսոնիտե/ շաղախով	քմ	6,0	2,46	14,74
2	11-80	Պատերի և առաստաղների հին ներկի մաքրում և սվաղի հարթեցնում	100քմ	0,84	25,09	21,07
3	14-423	Առաստաղի բարձրորակ ներկում լատեքս ներկով	քմ	24,00	1,72	41,17
4	14-422	Պատերի բարձրորակ ներկում լատեքս ներկով	քմ	60,00	1,45	87,14
5	5-27	Մանրատախտակյա հին հատակների նորոգում	քմ	8	5,37	42,98
6	5-124	Հատակի ծածկ 10մմ հաստ.լամինատից պլաստմասե շրիշակներով	քմ	24	7,34	176,11
7	15-614	Թուջե մարտկոցների և մետաղական ճաղերի յուղաներկում 2 անգամ	քմ	5	1,028	5,14
	ընդամենը					**388,3**
		Առաջին մասնաշենքին հարող ներքին բակի ասֆալտապատում				
1	27-33	Ասֆալտաբետոնյա ծածկի քանդում հիդրավլիկ մուրճերով 5սմ հաստ.	խմ	4	3,66	14,64
2	գնաց-3 1մ,տր	Քանդած ասֆալտաբետոնի բարձում և տեղափոխում 12կմ 4x2,4	տն	2	3,28	6,57
3	1-963	4-րդ կարգի գրունտի փորում ձերքով առանձին հատվածներում	խմ	5	3,35	16,77
4	գնաց-3 1մ,տր	Ավելորդ գրունտի բարձում և տեղափոխում 12կմ 5x1,80	տն	2	3,04	6,08
5	16-51	Խճի նախաշերտի վերականգնում առանձին հատվածներում	խմ	5	7,04	35,20
6	շուկա	Գոյություն ունեցող ասֆալտաբետոնյա ծածկի վերին շերտի քերում և բարձում մեխանիզմների միջոցով տեղափ. 12 կմ	քմ	170,0	0,78	132,60
7	վ16-162 վ16-163	Վերին շերտի ծածկը 5,0սմ հաստ. մանրահատիկ ասֆալտաբետոնից ամբողջ մակերեսով	100մ²	2,500	468,69	1171,7
	ընդամենը					**1383,6**
	Ընհամենը՝ ըստ մասերի					**5627,7**
	Վերադիր ծախսեր					**748,4**

	13,3%					
	ընդամենը					
	Շահույթ 11%					6376,2
	Ընդամենը առաջին մասնաշենք					701,38
						7077,6
		Երկրորդ մասնաշենք Մարզադահլիճ				
1	27-33	Ասֆալտաբետոնյա ծածկի քանդում հիդրավլիկ մուրճերով 5սմ հաստ.	խմ	1,75	3,66	6,41
2	գնաց-3 1մ,տր	Քանդած ասֆալտաբետոնի բարձում և տեղափոխում 12կմ 1,75x2,4	տն	4,2	3,28	13,79
3	16-60	Բազալտյա 300*150մմ եզրաքարերի քանդում և պահեստավորում	գ/մ	23	0,76	17,49
4	1-1594	4 -րդ կարգի հողի փորում խրամուղում էքսկավատորով 0,5խմ և բարձում	100խմ	0,16	80,92	12,95
5	գնաց-3 1մ,տր	Բարձած ավելորդ գրունտի տեղափոխում 12կմ 16x1,80	տն	10.8	2,35	25.39
6	1-1552	4 -րդ կարգի հողի փորում խրամուղում էքսկավատորով 0,5խմ կողլիցք	100խմ	0,64	63,89	40,89
7	1-963 գ-1,2	4-րդ կարգի գրունտի փորում ձերքով խրամուղում մեխանիզմից հետո	խմ	4	4,01	16,04
8	11-157	Գոյություն ունեցող հենապատի սվաղում ցեմենտյա շաղախով մետաղական 50*50*2mm ցանցի վրա	քմ	75	2,98	223,85
9	շուկա	Հենապատի ջրամեկուսացում ապակեթելային ցանցապատումով բիտումային Mapei Peostimul մեկուսիչով ներառյալ աշխատավարձը	քմ	75	5,83	437,25
10	1-969	Գրունտի ետլիցք ձերքով և տոփանում	խմ	4	0,97	3,87
11	1-1635	Նույնը բուլդոզեռով	100	0,64	6,91	4,42
12	27-78	Նախկինում ապամոնտաժված բազալտյա եզրաքարերի տեղադրում նոր բետոնյա հիմքերի պատրաստմամբ	գ/մ	23	2,87	66,0
13	6-20	Լրացուցիչ, բետոնյա ժապավենային հիմքեր B15 բետոնից եզրզքարերի համար 4խմ-1,36=2,64	խմ	2.64	51.6	136.10
14	16բ-51	խճի նախաշերտի վերականգնում	խմ	5	7,04	35,20
15	16բ-5	Նույնը ասֆալտաբետոնի ծածկը 5սմ	քմ	40,00	5,00	200,16
16	11-95 0.8	Էպոքսիդե ծածկույթի փչացած մասի կտրում հանում	քմ	30	0,97	29,21
17	11-57	Պատերի սվաղի նորոգում գաջե /գիպսոնիտե/ շաղախով	քմ	30,0	2,12	63,66
18	11-80	Պատերի և առաստաղների հին ներկի մաքրում և սվաղի հարթեցնում	100քմ	1,20	25,09	30,10
19	14-422	Պատերի բարձրորակ ներկում լատեքս ներկով	քմ	60,00	1,45	87,14
20	14-372	Պատերի բարձրորակ յուղաներկում սվաղի վրա	100քմ	0,9	138,72	124,85
21	Ակվատուս ՍՊԸ	Հատակների ծածկույթի վերանորոգում բարձր որակի էպոքսիդե մածիկով 3-4մմ հաստ,ներառյալ աշխատավարձը	քմ	30	19,16	574,80
	ընդամենը					2149.6
	Վերադիր ծախսեր 13,3%					285.9(
	ընդամենը					2435.5
	Շահույթ 11%					267.91
	Ընդամենը երկրորդ մասնաշենք					2703.4
		Հանրակացարանային մասնաշենք				
1	23-166	Լոգասենյակների և ցնցուղարանների հատակի սալիկների քանդում	քմ	12	0,38	4,52
2	5-77	Հատակների ջրամեկուսացում բիտումե մածիկով	քմ	8	0,68	5,46
3	5-115	Հատակի ծածկ կերամիկական սալիկներից	քմ	12,0	6,66	79,98
4	34-316 0,6 0,7	Մաքրուհիների և պահեստային մասի սենյակների պլաստմասե կախովի առաստաղների ապամոնտաժում	քմ	25,00	1,5	37,80
5	11-80	Մաքրուհիների և պահեստային մասի միջանցքի	100քմ	0,42	25,09	10,54

		առաստաղների և պատերի մաքրում և սվաղի հարթեցնում				
6	11-57	Նույնի պատերի սվաղի նորոգում գաջե /գիպսոնիտե/ շաղախով	քմ	38,0	2,12	80,64
7	34-316 0,6 0,7	Խոհանոցի գիպսակարտոնե կախովի առաստաղների ապամոնտաժում	քմ	4.00	1,5	6.05
8	23-119	Խոհանոցի բետոնյա առաստաղների մեջ անցքերի բացում Φ-150մմ	հատ	2	3,31	6,63
9	17-73	Հրշեջ ջրի արկղների միացման Φ-50մմ հանգույցների փոխում նոր հանգույցներով	գ/մ	2	3,28	6,55
10	17-92	Նույնի Φ-50մմ հրշեջ փականները	հատ	3,0	10,79	32,37
11	34-316 34-352	Կախովի առաստաղի կառուցում պլաստմասե սալերով մետաղական կարկասի վրա սենյակներում	քմ	25	5,8	144,59
12	34-316 34-354	Կախովի առաստաղի կառուցում 12,5մմ ջրակայուն գիրսակարտոնե սալերով կարկասի վրա խոհանոցում	քմ	4	5,7	22,64
13	14-422	Պատերի բարձրորակ ներկում լատեքս ներկով	քմ	80,00	1,45	116,19
14	8-160	Մապզադահիլճի տանիքի վնասված ասբոցեմենտյա ծածկի փոխում	քմ	20	2,4	48,78
15	1-963	4-րդ կարգի գրունտի փորում ձերքով մայթեզրերի կառուցման համար	խմ	10	3,35	33,53
16	5-67	Հատակների խճի նախաշերտ քանդած գրունտի հատվածում	խմ	2,5	11,97	29,91
17	5-72	Մայթեզրի բետոնյա շերտ B22,5 մակնիշի բետոնից	խմ	6,0	39,35	236,11
18	11-105	Արտաքին պատերի բարձրորակ ցեմենտյա սվաղ 1մ բարձրությամբ	քմ	25	1,87	46,80
19	16-33 0.4	Պլաստմասե Φ-50մմ կոյուղու խողովակների ապամոնտաժում	գ/մ	16	0,26	4,20
20	16-34	Կոյուղու պոլիէթիլենային Φ=100մմ խողովակների տեղադրում	մ	16	2,090	33,43
21	Շուկա	Կոյուղու ձևավոր մասեր d=100մմ պոլիէթիլենային խողովակն,համար	հատ	15	0,488	7,33
	ընդամենը					
		Հանրակացարանային մասնաշենք **Կաթսայատուն**				**994.06**
1	17-65	Կաթսայատան սնուցող Φ-50-63մմ խողովակների ապամոնտաժում	գ/մ	55	0,45	24,72
2	1-963	4-րդ կարգի գրունտի փորում ձերքով խողովակների փոխարինման համար	խմ	5	3,35	16,77
3	23,38 0.6	Նկուղային հարկի պատերում Φ-100մմ անցքերի բացում ջրագծի համար	հատ	2	3,06	6,12
4	16-264	Պոլիպրոպիլենային խողովակ Φ=50մմ կաթսայատան համար	մ	38	2,70	102,48
5	Շուկա	Պոլիպրոպիլենային խողովակների ձեվավոր մասեր Φ=50մմ	հատ	13	0,55	7,13
6	16-82	Պողպատե Φ=57x3մմ խողովակների մոնտաժում կաթսանատնում	մ	8	2,41	19,25
7	16-83	Պողպատե Φ=63մմ խողովակների մոնտաժում կաթսանատնում	մ	10	3,33	33,34
8	16-117	Փականների տեղադրում Φ=50մմ նկուղում և կաթսանատանը	հատ	2	6,85	13,70
9	26-16	խողովակաշարի ջերմոմեկուսացում Ֆոլգայապատ իզոտոպրակից 40մմ հաստությամբ	խմ	0,3	40,36	12,11
10	1-969	Գրունտի ետլիցք ձերքով և տուփանում	խմ	5	0,97	4,84
11	գնաց-3 1մ,տր	Ավելորդ գրունտի և աղբի բարձում և տեղափոխում 12կմ	տն	5	3,04	15,21
	ընդամենը					
	Ընդամենը					**255,66**
	Վերադիր ծախսեր 13,3%					**1249,7**
	ընդամենը					**166,21**
	Շահույթ 11%					**1415,9**
	Ընդամենը					**155,75**
						1571,68

	հանրակացարանային մասնաշենք					
	Հիմնական օբյեկտների վերանորոգում					
1	Առաջին ուսումնական մասնաշենքի վերանորոգման աշխատանքներ					7077.6
2	Երկրորդ ուսումնական մասնաշենքի վերանորոգման աշխատանքներ					2703.4
3	Հանրակացարանային մասնաշենքի և կաթսայատան ջրագծի վերանորոգման աշխատանքներ					1571.68
	ընդամենը					
	Ժամանակավոր շինություններ -0,5% 1%X0.5					11352,7 56,76
	ընդամենը					
ա	Կլիմայական պայմաններ 0,3% , 06%x0.5					11409,4 34,23
բ	Փոքր ծավալի շինմոնտաժային աշխատանքների համար-2%					228,19
գ	Աշխատանքների ավարտից հետո տարածքի մաքրման և շինաղբի տեղափոխման ծախսեր -0,15%					17,11
	Ընդամենը ա,բ, գ					
	ընդամենը					279,53
Ա	Տեխնիկական հսկողություն 2%					11689,0 233.78
Բ	Հեղինակային հսկողություն 0,6%					70.13
	Ընդամենը Ա,Բ					
	Ընդամենը					303.91
	Չնախատեսված ծախսեր 3%					11992,9 359,79
	ընդամենը					
	ԱԱՀ 20%					12352,7 2470,5
	ընդամենը					14823,2

CPV 45461100

Ընդամենը՝ 14.823.250 << դրամ

* Աշխատանքների ամբողջ ծավալն հանդիսանում է որպես մեկ չափաբաժին և դրանք պետք է կատարվեն ք. Երևան, Թումանյան 42 և Հ.Էմին 123 հասցեներում :

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական
լեզվահասարակագիտական համալսարանե
հիմնադրամ
ք.Երևան, Թումանյան 42
Ամերիաբանկ ՓԲԸ, Մոսկովյան մ/ճ
Հ/Հ 1570017727040100
ՀՎՀՀ 00005614
Ռեկտոր՝ Կ.Հարությունյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Էլիտ Հիլզ» ՍՊԸ
Արմավիրի մ գ Բամբակաշատ 14/1 տ3
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1150014351360100
ՀՎՀՀ 04421922
Տնօրեն՝ Հ. Եղիազարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված թիվ 2

«24» հուլիսի 2019թ. կնքված
«ԵՊԼՀ-ԳՀԱՇՁԲ19/17» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«Շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքների կատարման

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	**Առաջին մասնաշենք** ➢ 2-րդ հարկ 206 սենյակ, նիստերի դահլիճ ➢ 4-րդ հարկ 408 սենյակ, գերմարենի ➢ **Առաջին մասնաշենքին հարող ներքին բակի ասֆալտապատում** **Երկրորդ մասնաշենք** ➢ **Մարզադահլիճ** **Հանրակացարան** ➢ **Հանրակացարանային մասնաշենք** ➢ **Կաթսայատուն**	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	մինչև 24.08.2019թ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանե հիմնադրամ
ք.Երևան, Թումանյան 42
Ամերիաբանկ ՓԲԸ, Մոսկովյան մ/ճ
Հ/Հ 1570017727040100
ՀՎՀՀ 00005614
Ռեկտոր՝ Կ.Հարությունյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Էլիտ Հիլզ» ՍՊԸ
Արմավիրի մ գ Բամբակաշատ 14/1 տ3
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1150014351360100
ՀՎՀՀ 04421922
Տնօրեն՝ Ս.Ներսիսյան

ստորագրություն

Կ.Տ.

Հավելված N 3
«24» հուլիսի 2019թ. կնքված
«ԵՊԼՀ-ԳՀԱՇՁԲ19/17» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Աշխատանքի անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**					
				սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100	Շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ		10,723,200	10,723,200	10,723,200	10,723,200	10,723,200

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական
լեզվահասարակագիտական համալսարանե
հիմնադրամ
ք.Երևան, Թումանյան 42
Ամերիաբանկ ՓԲԸ, Մոսկովյան մ/ճ
Հ/Հ 1570017727040100
ՀՎՀՀ 00005614
Ռեկտոր՝ Կ.Հարությունյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Էլիտ Հիլզ» ՍՊԸ
Արմավիրի մ գ Բամբակաշատ 14/1 տ3
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1150014351360100
ՀՎՀՀ 04421922
Տնօրեն՝ Հ. Եղիազարյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 4
«24» հուլիսի 2019թ. կնքված
«ԵՊԼՀ-ԳՀԱՇՁԲ19/17» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«24» հուլիսի 2019թ. կնքված
«ԵՊԼՀ-ԳՀԱՇՁԲ19/17» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 8
«ԵՊԼՀ-ԳՀԱՇՁԲ-19/17»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան

«_____»_____ 2019 թ.**

Էլիտ Հիլզ ՍՊԸ ի դեմս Ընկերության տնօրեն Հ.Եղիազարյան ն/ք 002779437 տրված 12,10,2015թ 001 կողմից որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ԵՊԼՀ Հիմնադրամի * (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված«ԵՊԼՀ-ԳՀԱՇՁԲ-19/17»* ծածկագրով գնման ընթացակարգին:
ընթացակարգի ծածկագիրը

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Էլիտ Հիլզ» ՍՊԸ
Արմավիրի մ գ Բամբակաշատ 14/1 տ3
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1150014351360100
ՀՎՀՀ 04421922

Տնօրեն՝ Հ. Եղիազարյան Կ.Տ.

Օր/ամիս/տարի

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ փոխհրապարակելը տեղեկագրում հրապարակելը:*

1.

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[40]

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն `Էլիտ Հիլզ ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ 11500431918819

7. Վճարողի ՀՎՀՀ՝04421922

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 00005614

12. Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝Ամերիաբանկ ՓԲԸ, Մոսկովյան մ/ճ

13.Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 1570017727040100

14.Գումարը (թվերով և բառերով)՝1072320 մեկ միլիոն յոթանասուներկու հազար երեք հարյուր քսան

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝*«ԵՊԼՀ-ԳՀԱՇՁԲ19/17»*

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները	21.ա. Վճարողի ստորագրությունները
/_____/	/_____/
/_____/	/_____/
22.բ. Կ.Տ.	21.բ. Կ.Տ.

[40] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.